



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԷ
 Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, 5 Օգոստոսը, Ս. Աստուածածնի Պահոց բարեկենդանն է. իսկ յառաջիկայ Կիրակի տօնն է Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Յաւարտ Ս. Պատարագի, եւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան խնդրանքով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական եւ ազգային նուիրեալ գործիչ Տոքթ. Միսակ Արզումանեանի մահուան քառասունքին առիթով: Արարողութեան պիտի նախագահէ Առաջնորդ Սրբազանը:

PRELATE TO PRESIDE OVER MASS AT ST. GARABED CHURCH

According to our church calendar Sunday, August 5, is the Eve of the Fast of Assumption, and on the following Sunday we celebrate the Feast of the Assumption of the Holy Mother of God. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, will preside over Mass at St. Garabed Church in Hollywood and deliver the sermon.

Also on that day, by the request of the Regional Executive of Homenetmen, fortieth day requiem service will be conducted for Dr. Misak Arzoumanian. The Prelate will preside over the service.

**11 ՕԳՈՍՏՈՍԻՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ
 ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ**

Ուրախ եւք յայտնելու մեր հաւատացեալ ժողովուրդին, որ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Շաբաթ, 11 Օգոստոսին, Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի, երեկոյեան ժամը 6:30ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի Ազգ. Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն Մատրան մէջ:

Ծանօթ է որ Ազգային Առաջնորդարանի նորակառույց շէնքի մատրան մէջ անդրանիկ Ս. Պատարագը մատուցած էր Առաջնորդ Սրբազանը՝ Ս. Տրդատ թագաւոր եւ Ս. Աշխէն թագուհիի տօնին առիթով: Նոյն օրը, Առաջնորդ Սրբազանը յայտարարած էր, որ մատրան մէջ ամսական հերթականութեամբ Ս. Պատարագ պիտի մատուցուի մեր ժողովուրդին ու մանաւանդ երիտասարդներու համար:

Յառաջիկայ 11 Օգոստոսին, Ս. Պատարագը պիտի մատուցանէ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, որ նաեւ պիտի տայ յաւուր պատշաճի քարոզ մը:

HOLY MASS AT THE PRELACY CHAPEL

We are pleased to announce that on the occasion of the Feast of the Shoghagat of Holy Etchmiadzin, Holy Mass will be offered at the Prelacy St. Dertad and St. Ashkhen Chapel Saturday, August 11, at 6:30 p.m.,. The first Mass at the Chapel was celebrated on the Feast of St. Dertad and St. Ashkhen during which time the Prelate announced that Mass would be offered at the Prelacy on a monthly basis for our faithful parishioners and specifically for our youth.

Mass will be conducted by Christian Education Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian who will also deliver the sermon.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽԱՂՈՂՕՐԻՆԷՔ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԷՋ

Ուրբաթ, 10 Օգոստոսին, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Զօր տնօրինումով եւ նախագահութեամբ, Ս. Պատարագ պիտի մատուցուի Միշըն Զիլզի «Արարատ Տան» մատրան մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Զոգեւոր Զովիւներէն Արժ. Տ. Նարեկ Քիւյ. Փեղիւանեան: Արարողութեան մասնակցութիւն պիտի բերէ Թեմիս հոգեւորականաց Դասը:

Ս. Պատարագէն առաջ, ժամը 10ին, հաստատութեան հիւանդանոցի բաժնի սրահին մէջ տեղի պիտի ունենայ խաղողօրինէք: Իսկ արարողութիւններէն ետք, եւ համաձայն տարիներու աւանդութեան, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը մտերմիկ պահ մը պիտի բոլորեն հաստատութեան պատսպարեալներուն ու անձնակազմի անդամներուն հետ:

HOLY MASS AND BLESSING OF GRAPES AT ARARAT HOME

By the ordinance of the Prelate, on Friday, August 10, Holy Mass and blessing of grapes will take place at Ararat Home in Mission Hills to celebrate the Feast of the Assumption of the Holy Mother of God. Rev. Nareg Pehlivanian, Pastor of Holy Cross Cathedral in Montebello, will conduct Mass. Prelacy clergy members will also participate.

The blessing of grapes ceremony will take place prior to Mass in the hospital ward of the establishment. In keeping with tradition, the Prelate and clergy members will visit the residents and staff following Mass.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԸ Կ'ԱՌԱՔԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Հայաստանի Ոսկրածուծի Հիմնադրամի վարչությունը Կիրակի, 5 Օգոստոսին, ժամը 7ին, կազմակերպած է ճաշկերոյթ մը, պատուելու համար շարք մը նուիրեալ ծառայողներ, որոնք տարբեր մարզերու մէջ ունեցած են հանրօգուտ աշխատանք:

ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի «Հիլթըն» պանդոկին մէջ: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին գնահատանքն ու բարեմաղթութիւնները:

PRELATE REPRESENTED AT THE ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY BANQUET

On the evening of Sunday, August 5, the Match for Life Banquet of the Armenian Bone Marrow Donor Registry will take place at the Glendale Hilton, during which community members will be honored for their service to the organization.

Very Rev. Fr. Muron Aznikian will attend on behalf of the Prelate and convey his best wishes.

ԹԵՄԻՍ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

Արեւմտեան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգային Վարչութեան հրաւերով, Չորեքշաբթի, 1 Օգոստոսի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ համախմբում-ժողով, որ ի մի բերաւ մեր Թեմի եկեղեցիներուն հոգեւոր հովիւներն ու հոգաբարձութեանց

ատենապետները: Հանդիպումին նպատակն էր խորհրդակցութիւն ունենալ ծխական շրջաններու աշխատանքներուն յաւելեալ մղում տալու միջոցներուն մասին, ապա նաեւ քննարկել ու լուծումներ որոնել այդ աշխատանքներուն ընթացքին դիմագրաւուած գանազան հարցերուն:

Ժողովը սկսաւ ժամը 7:45ին, աղօթքով: Առաջնորդ Սրբազանն ու Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան ողջունեցին ներկաները եւ բացատրեցին ժողովին նպատակն ու հեռանկարները:



Ծխական շրջաններու ներկայացուցիչները արծարծուած հարցերուն մասին փորձառութիւններ փոխանակեցին, ինչպէս նաեւ ներկայացուցին որոշ մտահոգութիւններ, որոնք հասարակաց բնոյթ ունին: Բոլորի վկայութեամբ, ժողովին այս բաժինը եղաւ շահեկան, որովհետեւ փորձառութեանց փոխանակումն ու հարցերու միատեղ քննարկումը օգուտ

բերաւ ու բարիք կը խոստանայ բոլորի աշխատանքներուն:

MEETING OF PRELACY PASTORS AND BOARDS OF TRUSTEES CHAIRMEN

On the evening of Wednesday, August 1st, by the invitation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council, Prelacy Pastors and Boards of Trustees Chairmen met at “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall. The primary purpose of the meeting was to discuss means of invigorating the activities of the parishes, as well as to examine and resolve any issues that may be affecting the parishes.



The meeting convened with a prayer, followed by welcoming remarks by the Prelate and Executive Council Chair Dr. Garo Agopian, both of whom also expanded on the objective of the meeting. Throughout the meeting, parish representatives had the opportunity to share their experiences as well as to express concerns.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԲԱՐԻ ԵՐԹ ԿԸ ՄԱՂԹԷ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՏ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՊԱՏՈՍԻՆ

Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Հայրը այս շաբաթ հրաժեշտի նամակ մը ստացաւ Լիբանանի գլխաւոր հիւպատոս Շարպէլ Ուահպիէն: Հիւպատոս Ուահպէ Փետրուար 2002-էն ի վեր կը պաշտօնավարէր Լոս Անճելըսի մէջ եւ այժմ, իր կառավարութեան որոշումով, դեսպանի պաշտօնին կոչուած Է Վենեզուելայի մէջ:

Իր նամակին մէջ, լիբանանցի դիւանագետը գոհունակութիւն կը յայտնէ Առաջնորդ Սրբազանին եւ ընդհանրապէս Լոս Անճելըս բնակող նախկին լիբանանահայերուն՝ իր պաշտօնավարութեան ընթացքին ստեղծուած գործակցութեան եւ ջերմ յարաբերութեան համար:

Առաջնորդ Սրբազանը իր կարգին հաղորդակցութեան մէջ հիւպատոսի գլխաւոր տեղակալ Ֆատի Հաժ Ալի հետ, բարի երթ մաղթելու պաշտօնաւարտ դիւանագետին: Առաջնորդ Սրբազանը նաեւ յաջողութիւն մաղթեց հիւպատոսի տեղակալին եւ յոյս յայտնեց մօտալուս տեսակցութեան մը:

PRELATE CONVEYS WELL WISHES TO DEPARTING CONSUL GENERAL OF LEBANON

In this past week the Prelate received a farewell letter from Lebanese Consul General the Hon. Charbel Wehbi who has been appointed Ambassador of Lebanon to Venezuela. In his letter, the Consul General expressed his appreciation to the Prelate for his friendship and that of Lebanese-Armenian community during his five years of service in Los Angeles.

The Prelate was in contact with the Consulate to extend his well wishes to the departing Consul General. H.E. had previously congratulated the then Consul General on his promotion. The Prelate also conveyed his best wishes to acting Consul Fady Hajj Ali, reaffirmed the support of the Armenian community, and hoped to meet with him in the near future.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ ՄԻՆԵՍՈՒԹԱ ՆԱՀԱՆԳԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԻՆ

Ծանօթ է, որ Չորեքշաբթի, 1 Օգոստոսին, աղետալի արկած մը արձանագրուած էր Մինեսոթայի մէջ, ուր Interstate 35W կամուրջի փլուզումին հետեւանքով արձանագրուած էին զոհեր եւ վիրաւորներ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հայրը Հինգշաբթի օր զօրակցական նամակ մը յղեց Մինեսոթա նահանգի կառավարիչ Թիմ Փոլէնթիի: Ան յանուն Թեմիս ժողովականութեան, հաւատացեալներուն ու անձնապէս ցաւակցութիւն յայտնեց կառավարիչին ու զոհերու ընտանիքներուն, միաժամանակ նշելով, որ »սուգի այս պահուն, մեր աղօթքներով ձեզի հետ ենք ու կը կարեկցինք զոհերու հարազատներուն«:

PRELATE EXPRESSES CONDOLENCES TO MINNESOTA GOVERNOR TIM PAWLNTY

Following the devastating collapse of the Interstate 35W Bridge in Minnesota, on Thursday, August 2nd, the Prelate sent a letter of condolence and support to Governor Tim Pawlenty on behalf of Prelacy councils, pastors, and parishioners.

The Prelate expressed his sympathies to the Governor as well as to the victims' families and offered consolation as they deal with this tragedy.